Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
օգոստոսի 27-ի N 1272-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՀՈՒՄՔԻ ՈՒ ՆՅՈՒԹԵՐԻ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափի միավորը	Քանակը	Ծագման երկիրը	Արտահանման երկիրը	Արժեքը (դրամ)	Այլ տեղեկություններ
ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ									
1.	2713909000	Նավթավերամշակման արդյունքում ստացված մնացորդ՝ բիտումի հումք	Նավթավերամշակման արդյունքում ստացված մնացորդային արտադրանքը հանդիսանում է ծանր նավթային մնացորդ, որը նախատեսված է բիտումի արտադրության համար որպես հիմնական հումք: Հիմնական բնութագրեր՝	կգ	30 000 000	Իրանի Իսլամական Հանրապետություն, Իրաքի Հանրապետություն	Իրանի Իսլամական Հանրապետություն, Իրաքի Հանրապետություն	4 000 000 000	

			Արտաքին տեսք՝ մուգ գույնի, մածուցիկ հեղուկ կամ կիսապինդ նավթային մնացորդ: Գույն՝ սև կամ մուգ շագանակագույն: Նշանակություն՝ բիտումի և այլ ծանր նավթամթերքների արտադրության հումք:						
2.	2710192900	Թեթև Սոլվենտ	**Ապրանքի նկարագրություն** Նավթային միջին թորվածքը (Թեթև Սոլվենտ) նավթավերամշակման արդյունքում ստացված միջանկյալ արտադրանք է, որը հանդիսանում է թեթև և միջին ֆրակցիաների ածխաջրածնային խառնուրդ: Նախատեսված է հետագա վերամշակման միջոցով կերոսինի,	կգ	8 000 000	Իրանի Իսլամական Հանրապետություն, Իրաքի Հանրապետություն	Իրանի Իսլամական Հանրապետություն, Իրաքի Հանրապետություն	2 500 000 000	

			ավիացիոն վառելիքի բաղադրիչների և այլ նավթամթերքների արտադրության համար: **Հիմնական տեխնիկական բնութագրեր՝** Արտաքին տեսք՝ թափանցիկ կամ թույլ դեղնավուն հեղուկ: Գույն՝ անգույնից մինչև բաց դեղնավուն: Հոտ՝ բնորոշ նավթային հոտով: Ֆրակցիոն կազմ՝ միջին թորման միջակայքի ածխաջրածիններ:						
3.	2710192900	Սոլվենտ	**Ապրանքի նկարագրություն** Նավթային միջին թորվածքը (Սոլվենտ) նավթավերամշակման արդյունքում ստացված	կգ	18 000 000	Իրանի Իսլամական Հանրապետություն, Իրաքի Հանրապետություն	Իրանի Իսլամական Հանրապետություն, Իրաքի Հանրապետություն	5 200 000 000	

			միջին ֆրակցիայի ածխաջրածնային խառնուրդ է, որը նախատեսված է որպես հումք՝ հետագա վերամշակման միջոցով կերոսինի, ավիացիոն վառելիքի և այլ նավթամթերքների արտադրության համար: **Հիմնական տեխնիկական բնութագրեր՝** Արտաքին տեսք՝ թափանցիկ, միատարր հեղուկ: Գույն՝ անգույնից մինչև բաց դեղնավուն: Բաղադրություն՝ պարաֆինային, նաֆթենային և արոմատիկ ածխաջրածինների խառնուրդ:						

4.	2710192500	Կերոսին	**Ապրանքի նկարագրություն** Նավթային միջին թորվածքը հանդիսանում է նավթավերամշակման արդյունքում ստացված միջանկյալ արտադրանք՝ կազմված միջին ֆրակցիայի ածխաջրածնային միացություններից: Նախատեսված է որպես հումք՝ հետագա վերամշակման միջոցով կերոսինի, ավիացիոն վառելիքի (Jet A-1) և այլ նավթամթերքների արտադրության համար: **Ֆիզիկաքիմիական բնութագրեր**	կգ	6 000 000	Իրանի Իսլամական Հանրապետություն, Իրաքի Հանրապետություն	Իրանի Իսլամական Հանրապետություն, Իրաքի Հանրապետություն	1 800 000 000	

			Արտաքին տեսք՝ թափանցիկ, միատարր հեղուկ: Գույն՝ անգույնից մինչև բաց դեղնավուն: Հոտ՝ բնորոշ նավթային հոտ:						
	Ընդամենը							**13 500 000 000**	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

27.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ